# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի**
**Ջրաշեն համայնք,**
**հեռ.(077) 611-522**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 28 >> սեպտեմբերի 2021 թվականի N 29

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՋՈՆԻԿ ՆՈԴԱՐԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ 06-095-0065-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0.086519 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ կետերի պահանջներով, հաշվի առնելով, որ կառույցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և Լոռու մարզի Ջրաշեն համայնքի 8-րդ փողոց, 8-րդ նրբանցք 25 տան բնակիչ Ջոնիկ Նոդարիկի Մխիթարյանի համաձայնությունը ինքնակամ կառուցված շինությունները ձեռք բերելու, որոնք չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, քանի որ կառույցները կառուցված չեն ինժեներատրասպորտային օբյեկտների օտարման գոտում կառուցված չեն քաղաքացիական նորմերի և կանոնների էական խախտումներով և /կամ/ չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Օրենքի ուժով օրինականացնել և ճանաչել Ջոնիկ Նոդարիկի Մխիթարյանի ժառանգության իրավունքով Ջրաշեն համայնքում 06-095-0065-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.086519 հա տնամերձ հողամասի վրա 1989 թվականին կառուցված 100.50 քմ բնակելի տան նկուղը, 5.88քմ աստիճանահարթակը և 4.55քմ պարիսպը:

2.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տան նկուղը կառուցվել է ինքնակամ 1989 թվականին, այն չէր կարող կառուցվել բնակելի տան կառուցումից հետո, քաղաքացու կողմից ինքնակամ կառուցված նկուղի վրա պետական միջոցներով կառուցվել էր 1 հարկ և այն սեփականաշնորհվել է քաղաքացուն:Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոման 22-ի 1-ին կետը, օրինականցնել և ճանաչել Ջոնիկ Նոդարիկի Մխիթարյանի ժառանգության իրավունքով 06-095-0065-0001 կադաստրային ծածկագրի 0.086519 հա տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տան 100.50քմ նկուղը, 5.88 քմ աստիճանահարթակը և 4.55քմ պարիսպը:

3.Բնակելի տան 1-ին հարկի միջնորմների փոփոխությունը գտնվում է ռիսկայնության 1-ին գոտում և շինթույլտվություն չի պահանջում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ